ՀՀԿԽ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 նոյեմբեր, 2024 թվականի № 71-Լ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԻ ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ մասերով, 26-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 27-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածի 2-րդ մասով, 84-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ «Ընկերություն») կանոնադրությամբ, հիմք ընդունելով Ընկերության գործադիր տնօրենի 2024 թվականի նոյեմբերի 4-ի N-ՀՄ-02/773/24 գրությունը և հաշվի առնելով Հանրային հեռարձակողի խորհրդի 2024 թվականի սեպտեմբերի 9-ի № 59-Լ որոշման համաձայն կատարված գնահատման արդյունքում անկախ գնահատողի («Գույքի գնահատման և աճուրդի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն) կողմից ներկայացված գնահատման հաշվետվությունը՝ Հանրային հեռարձակողի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Հանրային հեռարձակողի խորհրդի 2024 թվականի սեպտեմբերի 9-ի № 59-Լ որոշմամբ նախատեսված՝ Ընկերությանը պատկանող 2023 թվականի արտադրության ՀՈՆԴԱ ԵՆՍ 1 (Honda ens 1) մակնիշի էլեկտրական թեթև մարդատար տրանսպորտային միջոցի (նույնացման համարը (VIN)՝ LVHRS1859P5201022) շուկայական արժեքը սահմանել 4 217 000 (չորս միլիոն երկու հարյուր տասնյոթ հազար) ՀՀ դրամ:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ա. ՇԻՐԻՆՅԱՆ

08 նոյեմբեր, 2024 թվականի

ք. Երևան